ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արձանագրություն

Ի կատարում տարածաշրջանային եվ եվրասիական ինտեգրման
հարցերի մշտական հանձնաժողովի 11.10.2021թ. թիվ 2 նիստի
արձանագրության քաղվածքի 3-րդ կետի

1. Հանձնաժողովը քննարկեց Հայաստանի Հանրապետության գործարարների համար Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների պետական գնումներին մասնակցության և շուկաների հասանելիության արդի հիմնախնդիրները:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Արմեն Գևորգյանը, հանձնաժողովի նախագահի տեղակալ Վաղարշակ Հակոբյանը, հանձնաժողովի անդամներ Շիրակ Թորոսյանը, Ալեքսեյ Սանդիկովը, Տրդատ Սարգսյանը, Խաչատուր Սուքիասյանը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վարոս Սիմոնյանը, Ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, ֆինանսների նախարարության, արտաքին գործերի նախարարության վարչության պետեր, այլ պաշտոնյաներ:

Որպես հիմնական զեկուցող հանդես եկավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վարոս Սիմոնյանը:

Հանձնաժողովն ի գիտություն ընդունեց Վարոս Սիմոնյանի հաղորդումը քննարկվող հարցի կապակցությամբ:

Հանձնաժողովն արձանագեց, որ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների պետական գնումներին Հայաստանի Հանրապետության գործարարների մասնակցության ծավալներն անբավարար են: Այդ ուղղությունը պետք է դիտարկվի որպես Եվրասիական տնտեսական միության չիրացված կարողությունների առաջնահերթություն Հայաստանի Հանրապետության համար:

Հանձնաժողովը որոշեց.

1) Հայաստանի Հանրապետության կառավարությունից (Էկոնոմիկայի նախարարություն, Ֆինանսների նախարարություն) սեղմ ժամկետներում ստանալ տեղեկատվություն՝

ա) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական գնումներին մասնակցության գործընթացներում բանկային երաշխիքների և էլեկտրոնային ստորագրությունների փոխադարձ ճանաչման, ապրանքի ծագման երկրի որոշման հետ կապված խոչընդոտների վերաբերյալ,

բ) այն սահմանափակումների վերաբերյալ, որոնք Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստանձնել է կամ ստանձնում է Եվրասիական տնտեսական միությունից դուրս այլ միջազգային կազմակերպությունների հետ (Եվրամիություն, Համաշխարհային բանկ, Ասիական զարգացման բանկ և այլն), որոնք ֆինանսական ռեսուրսներ են տրամադրում Հայաստանի Հանրապետությունում ծրագրեր իրականացնելու համար: Արդյո՞ք Եվրամիության կողմից Հայաստանի Հանրապետությանը նախատեսվող 2.6 մլրդ Եվրո աջակցությունը պարունակում է նմանատիպ սահմանափակումներ այլ երկրների՝ մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության կազմակերպությունների համար,

գ) Հայաստանի Հանրապետության գործարարների՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների պետական գնումների մասնակցության համար Եվրասիական բանկի գործիքակազմից օգտվելու հնարավորությունների վերաբերյալ,

դ) Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների պետական գնումներին փոխադարձ մասնակցության վերաբերյալ վիճակագրություն՝ ըստ տնտեսության առանձին ճյուղերի,

ե) Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների պետական գնումների գործընթացների թվայնացման մակարդակի, Հայաստանի Հանրապետության գործարարների համար այդ հարթակների հասանելիության և մատչելիության վերաբերյալ,

զ) Հայաստանի Հանրապետության պետական գնումներին Եվրասիական տնտեսական միության անդամներ երկրների գործարարների մասնակցության հասանելիության վերաբերյալ

է) Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների պետական գնումների համակարգում որակի սերտիֆիկացման միասնական համակարգի վերաբերյալ:

2) Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանը (Էկոնոմիկայի նախարարություն, Ֆինանսների նախարարություն).

ա) իրականացնել այնպիսի ընթացակարգեր, որոնք կապահովեն անհրաժեշտ և առավել արդյունավետ տեղեկատվական, խորհրդատվական և կազմակերպչական ուղեկցում Հայաստանի Հանրապետության այն գործարարների համար, որոնք ցանկանում են մասնակցել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների պետական գնումներին:

բ) ներկայացնել առաջարկություններ Հայաստանի Հանրապետության տնտեսության այն ճյուղերի մասով (սննդի արդյունաբերություն, թեթև արդյունաբերություն, գյուղատնտեսություն և այլն), որոնք պոտենցիալ առումով կարող են ընդլայնել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների պետական գնումներին մասնակցությունը:

2. Հանձնաժողովը քննարկեց Եվրասիական տնտեսական միության 2020-2025թթ. խոշորագույն արդյունաբերական շինարարության ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքը Հայաստանի Հանրապետությունում:

Որպես հիմնական զեկուցող հանդես եկավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վարոս Սիմոնյանը:

Հանձնաժողովն ի գիտություն ընդունեց Վարոս Սիմոնյանի հաղորդումը քննարկվող հարցի կապակցությամբ:

Հանձնաժողովն արձանագրեց, որ Հայաստանի Հանրապետությանում Եվրասիական տնտեսական միության 2020-2025թթ. խոշորագույն արդյունաբերական շինարարության ներդրումային ծրագրերը գտնվում են քննարկման փուլում: Ներդրումների ներգրավման ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Մտահոգիչ է, որ այդ ծրագրերի մի մասը սկսել է քննարկվել դեռևս 2009-2010 թվականներից և մինչ այս պահը իրականացված չէ:

Հանձնաժողովը որոշեց.

1) Առաջարկել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը ներկայացնել անհրաժեշտ պարզաբանումներ նշված ցանկում ներառված ծրագրերի ֆինանսավորման առանձնահատկությունների (մասնավոր, պետական, պետություն-մասնավոր հատված համագործակցություն), ինչպես նաև այդ ցանկում պղնձաձուլարանի կառուցման ծրագրի ներգրավման նպատակահարմարության մասին:

2) Առաջարկել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը Եվրասիական տնտեսական միության արդյունաբերական առցանց քարտեզի երեք ուղղություններում (առաջին՝ արդյունաբերության 21 ճյուղերի թվով 178 իրագործվող և պլանավորվող խոշոր ծրագրեր՝ 200 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրումների անհրաժեշտությամբ, երկրորդ՝ արդյունաբերության ավելի քան 20 ճյուղերի թվով 500-600 տեխնոլոգիական ուղղություն, որոնցով անհրաժեշտ է Եվրասիական տնտեսական միության տարածքում իրականացնել ներմուծման փոխարինում, երրորդ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծման առավել նշանակալի ծավալով ապրանքների խմբեր) ներառել բավարար ներուժ ունեցող Հայաստանի Հանրապետության կազմակերպություններին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**